

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտարարում է Հանձնաժողովում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի մասին

Միջազգային կապերի, տեղեկատվության և զարգացման ծրագրերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 84-2.2-15)

Բաժնի պետը կազմակերպում է Հանձնաժողովի համագործակցությունը օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունների և միջազգային կազմակերպությունների հետ, Հանձնաժողովի հանդիպումները հասարակայնության և զանգվածային լրատվամիջոցների հետ: Ապահովում է Հանձնաժողովի միջազգային ծրագրերի հետ կապված աշխատանքների իրականացումը, արտասահմանյան պատվիրակությունների հետ հանդիպումների արարողակարգը; Լուսաբանում է Հանձնաժողովի աշխատանքները: Իրականացնում է մամուլի շաբաթական, ամսական վերլուծական աշխատանքներ: Վարում է Հանձնաժողովի համացանցային կայքէջի տեղեկատվական մասը:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն,
- քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության երկրորդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:
- անգլերեն և ռուսերեն լեզուների ազատ տիրապետում.
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Պաշտոնը թափուր է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 13-ը:

Աշխատավարձը՝ 256 623 դրամ:

Դիմող ՀՀ քաղաքացիները Հանձնաժողով պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում,
- նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս

բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- անձնագրի պատճենը՝ բնօրինակի հետ միասին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10⁰⁰-ից 16⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 13.02.2019 թ.՝ ժամը 16⁰⁰ -ն:

Դիմող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Հանձնաժողով (ք. Երևան, Իսահակյան 28, հեռ. 52-94-62)